ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱՓԿ-2025-1

ք. Երևան 27 03 2025թ.

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ ի դեմս ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Վաղինակ Սարգսյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպման» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշմամբ սահմանված 321 100 600 (երեք հարյուր քսանմեկ միլիոն հարյուր հազար վեց հարյուր) ՀՀ դրամից վեց ամսվա համար՝ 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հուլիսի 1-ը, 144 496 000 (հարյուր քառասունչորս միլիոն չորս հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ գումար՝ «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման N 02 բաժնի N 05 խմբի N 01 դասի 02 ծրագրի գծով հաստատված հատկացումներից: Կազմակերպությունը պարտավորվում է իրականացնել ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման N 5 հավելվածի N 7 աղյուսակում նշված (ըստ դասիչների) 1177 ծրագրի 11001 միջոցառումը, և հատկացումներն օգտագործել Կազմակերպության 2025թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի պահպանման ծախսերի նախահաշվին համապատասխան:

1.2. ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառման արդյունքային չափորոշիչները ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված աշխատանքները և մատուցված ծառայությունները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը և տույժը.

2.1.3. առանց իրականացված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում, չի իրականացվելու.

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված աշխատանքների և մատուցվող ծառայությունների իրականացման ժամկետները (դրանց իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում).

գ. իրականացված աշխատանքները և մատուցված ծառայությունները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին:

2.1.4. Սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջելու իրեն հանձնել անավարտ աշխատանքների և ծառայությունների արդյունքները:

2.3. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.3.1. իրականացված աշխատանքների և մատուցված ծառայությունների արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.3.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.4. Պետական մարմինը պարտավոր է՝

2.4.1. ծրագրի շրջանակներում ապահովել հումանիտար հակաականային գործունեությունը սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը.

2.4.2. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.4.3. կատարել ծրագրի (առանձին աշխատանքների և մատուցվող ծառայությունների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.4.4. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.4.5. իրականացված աշխատանքների և մատուցված ծառայությունների մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված աշխատանքները և մատուցված ծառայությունները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.5. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.5.1. ծրագրի շրջանակներում ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ հումանիտար հակաականային գործունեության առարկայի, նպատակների և ազգային չափորոշիչների պահանջների կատարումը.

2.5.2. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.5.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.5.4. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.5.5. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.5.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.5.7. պետական մարմնի կողմից առանձին աշխատանքների և մատուցվող ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում՝ անվճար, պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.5.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

2.5.9. պայմանագրով սահմանված կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում՝ դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը.

2.5.10. սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների և մատուցվող ծառայությունների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ արդյունքն ընդունվելուն հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

Ընդ որում՝ սույն պարբերությամբ սահմանված պայմանը նախատեսվում է նաև տվյալ բյուջետային տարվա ընթացքում կնքվելիք պայմանագրերում:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Դրամաշնորհը տրամադրվում է համաձայն սույն պայմանագրի 1.1. կետի, վեց ամիս ժամկետով՝ 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. հուլիսի 1-ը, 144 496 000 (հարյուր քառասունչորս միլիոն չորս հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ գումարի չափով, որը կազմակերպությանը տրամադրվում է վերջինիս գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

4.2. Կազմակերպությանը վճարումները կատարվում են իրականացված աշխատանքների և մատուցված ծառայությունների մասին հաշվետվություն ներկայացնելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված ընդհանուր գնի 0,5 տոկոսի, և տույժ՝ 0,05 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի և տույժի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2025 թվականի հունվարի 1-ից հուլիսի 1-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, եղանակային անբարենպաստ այլ պայմանները, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պետական մարմինը որպես սույն պայմանագրի իրականացման պատասխանատու (համակարգող) ստորաբաժանում (համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հաստատված հավաստագրի, հանձնմանև ընդունման վկայականի, իրազեկման հաստատված ձևաթղթերի, գնահատման համար անհրաժեշտ այլ ձևաչափերի փաստաթղթերի գնահատման մասով) է սահմանում ՀՀ պաշտպանության նախարարության գործերի կառավարչությանը:

8.3.1. Պատասխանատու ստորաբաժանումն իրավունք ունի՝

ա. կազմակերպությունից պահանջել և գնահատել ականազերծված/հետազոտված տարածքների և իրազեկման վերաբերյալ փաստաթղթերը (համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հաստատված հավաստագիր, հանձնման և ընդունման վկայական՝ մաքրված տարածքի IMSMA քարտեզով և GPS կորդինատներով, իրազեկման հաստատված ձևաթղթեր, գնահատման համար անհրաժեշտ այլ ձևաչափեր).

բ. կազմակերպության հետ փոխգործակցությամբ իրականացնել վերահսկիչ այցեր իրազեկվող բնակավայրեր և հաստատություններ:

8.4. Կազմակերպությունը ծրագրի շրջանակներում անմիջական պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հումանիտար ականազերծման, հումանիտար հակաականային գործունեության առարկայի, նպատակների, ազգային չափորոշիչների, որակի կառավարման, ականային պատահարների կանխարգելման, անվտանգային, բնապահպանական պահանջների կատարման և դրանց ոչ պատշաճ կատարման դեպքում առաջացող հետևանքների համար:

8.5. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.6. Պայմանագիրը կնքվում է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011113223 ՀՎՀՀ 02522157	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 73 Ա Երևանի թիվ 1 գանձապետարան Հ/Հ 900018002254 ՀՎՀՀ 04724306
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ	Վ. ՍԱՐԳՍՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
2025թ. Նոյեմբեր 27 -ին
կնքված պետության կողմից դրամաշնորհի
ձևով տրամադրվող ֆինանսական
աջակցության գումարների օգտագործման
մասին պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Իրականացվելիք միջոցառումը					
Անվանումը	Կատարման ենթակա աշխատանքներ և մատուցվող ծառայություններ	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Ակնկալվող արդյունքի քանակական ցուցանիշը	Վերջնաժամ-կետը
Հակաականային գործողությունների ենթակա տարածքի հետազննում, քարտեզագրում, նախատեսվող ծավալի աշխատանքների հստակեցում և իրականացվող միջոցառումների պլանավորում	Վտանգավոր տարածքի (ՎՏ) մաքրում	Վտանգավոր տարածքի մաքրման աշխատանքների իրականացման արդյունքում կնվազեն ականներով և պատերազմի պայթյունավտանգ մնացորդներով ախտոտված տարածքները, մարդկանց համար ականային պատահարների ռիսկը կնվազի, իսկ մաքրված տարածքները կօգտագործվեն գյուղատնտեսական և այլ նպատակային նշանակությամբ: Ականազերծման աշխատանքները կիրականացվեն Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Կեչուտ բնակավայրի տարածքում, որի արդյունքում առնվազն 24 000 քմ տարածք կմաքրվի ականներից և պատերազմի պայթյունավտանգ մնացորդներից:	Ականներից և պատերազմի պայթյունավտանգ մնացորդներից վտանգավոր տարածքների մաքրում:	13 000	01.07.2025թ.

Հաստատում եմ՝ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԴ

Հաստատում եմ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ